ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., շ. 55, Հեռ. (060)700131

N 2809-25
05 դեկտեմբեր 2025 թ.

«ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԱՐԿԱԴԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Ձորաղբյուր 2224, Ջրվեժ
Այգետարածք 4/115

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Հարգելի՛ գործընկեր

Դիլիջանի համայնքապետարանի կարիքների համար անիվների և անվահեծի ձեռքբերման նպատակով, ՀՀ-ՏՄԴՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 04-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն, «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, նշված ընթացակարգի Չափաբաժին 3-ի և Չափաբաժին 6-ի համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի և Դիլիջանի համայնքապետարանի ՀՀ-ՏՄԴՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 9.3 և 10.1 կետերի պահանջների համաձայն, ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

Հաշվի առնելով այն փաստը, որ «Հիպոկրատ Դենտ» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումները, «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի համաձայն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ.՝ ՀՀ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի տեղակալ
Արմինե Աղաջանյան
աշխ հեռ. +37460700901